ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 205 - Ա **11 հոկտեմբերի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մարտի 20-ի թիվ194-Ն , ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի մարտի 26-ի թիվ 32-Ն, ՀՀ Պաշտպանության նախարարի 2012 թվականի ապրիլի 11-ի թիվ 323, ՀՀ ոստիկանության պետի 2012 թվականի մարտի 24-ի թիվ 5-Ն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2012 թվականի մարտի 21-ի թիվ 1-Ն, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի 2012թվականի ապրիլի 4-ի թիվ 1-Ն համատեղ հրամանով հաստատված «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթի անցկացման կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետը.

Կարգադրում եմ՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզում «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Բաղալյան Գ. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (նախագահ)

Բազիկյան Տ. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար

մասնագետ

Սիմոնյան Ա. - ՀՀ Գեղարքունիքի մարզի փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ /համաձայնությամբ/

Ափրեյան Խ. - Գավառի զինկոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ /համաձայնությամբ/

Սարգսյան Ռ. - ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ծառայության խմբի պրոֆիլակտիկայի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր /համաձայնությամբ/

Երվանդյան Ա. - ՀՀ ԱԱԾ Գեղարքունիքի մարզային վարչության աշխատակից /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովի նախագահին՝

1). սահմանված կարգի համաձայն կազմակերպել և անցկացնել «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթը.

2). մրցույթի ավարտից հետո ներկայացնել տեղեկատվություն:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ